ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

31 մարտի 2017 թվականի N 51-Ա

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման 1-ին կետի <<ա>> ենթակետով հաստատված N 1 հավելվածի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի մարտի 21-ի N 47-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի 2017 թվականի մարտի 24-ի N 6184-17 զեկուցագիրը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ ***Հայրություն Ալեքսանյանին*** 2017 թվականի ապրիլի 11-ից մինչև ապրիլի 21-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում վեց օրով, գործուղել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի հետևյալ համայնքներ՝ գյուղ Վերին Պտղնի՝ ապրիլի 11-ից 13-ը *(երեք օր)* և գյուղ Գեղադիր՝ ապրիլի 19-ից 21-ը *(երեք օր)՝ 2017 թվականի իրավական և մասնագիտական հսկողություն* իրականացնելու համար:

2. ***Հայրություն Ալեքսանյանի*** գործուղման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ՝ ***Վաչագան Թումանյանի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Կ. ԳՈՒԼՈՅԱՆ**

2017 թվականի մարտի 31
ք. Հրազդան